ՀՏԴ:75.046(479.25)+24
DOI: 10.54503/2579-2830-2022.2(8)-224

ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏԿԵՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ (ՄԱՍ 2)

ՎԻԳԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ*

Հղման համար. Ղազարյան, Վիգեն: «Պատկերագրության և պատկերաբանության շուրջ (մաս 2)»: *Արվեստագիտական հանդես,* N 2 (2022): 224-233. DOI: 10.54503/2579-2830-2022.2(8)-224

19-րդ դարի վերջից առ այսօր իրականացվում են քրիստոնեական արվեստի պատկերագրությանը նվիրված բազմաթիվ հետազոտություններ: Այս առումով աննախադեպ են Ս. Տեր-Ներսեսյանի բեղուն գործունեությունը և պատկերագրության ծագման և կազմավորման մեծ գիտակ Ա. Գրաբարի ուսումնասիրությունները: Հայ և մնացած երկրների քրիստոնեական արվեստում առավել ակնառու են ոճական տարբերությունները: Ամենից շատ պատկերազարդվել են Սուրբ Ավետարանները: Միջնադարյան մանրանկարչության և զարդարվեստի մեկնաբանման համար աղբյուր է հանդիսացել հիմնականում Սուրբ Գիրքը, որը հնարավորություն է տալիս հասկանալ աստվածաբանական բովանդակությունը և նրանից շեղման հավաստման հնարավորությունը հայ, ինչպես նաև ասորական, բյուզանդական, վրացական, կարոլինգյան, ռոմանական, գոթական և առհասարակ միջնադարյան արվեստների համար: Հայ եկեղեցու դավանաբանական խնդիրների մեկնաբանման և դավանաբանությունը հասկանալու համար շատ կարևոր են «Գիրք թղթոց» և«Կնիք հավատոց» երկերը:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվում է, որ դավանաբանությունը անմիջական ազդեցություն է թողնում պատկերագրության վրա: Պատկերագրական տարբերությունները միջնադարում հատկապես ակնառու են զարդարվեստում:

Բանալի բառեր՝ պատկերագրություն, դավանաբանություն, միջնադարյան արվեստ, մանրանկարչություն, զարդարվեստ, «Գիրք թղթոց», «Կնիք հավատոց»:

Ներածություն

19-րդ դարի վերջից առ այսօր գրվել և գրվում են քրիստոնեական արվեստի պատկերագրությանը նվիրված բազմաթիվ հատորներ՝ սկսած ընդհանուր աստվածաբանական բառարաններից ու հանրագիտարաններից մինչև բուն կերպարվեստին նվիրված աշխատություններ: Այս կամ այն չափով գիտական պատկերագրական ուսումնասիրություններ ու դիտարկումներ են հրատարակված: 19-րդ դարի վերջից և 20-րդ դարի սկզբից սկսվում են հայ միջնադարյան արվեստին նվիրված բազմաթիվ և բազմաբնույթ ուսումնասիրություններ ի դեմս Յ. Ստրիժիգովսկու, Գ. Հովսեփյանի, որոնցից ամեն մեկը հիմնաքար է դնում հայ արվեստի պատկերագրության բացահայտման մեջ, ընդ որում Գ. Հովսեփյանի գրվածքներին առավել հատուկ են նկարագրական և պատմաբանասիրական մեթոդները: Հաջորդ փուլն այդ տեսակետից պետք է համարել Հայաստանում խորհրդային շրջանը՝ ի դեմս Ռ. Դրամբյանի, Լ. Դուռնովոյի, Վ. Լազարևի, որոնք ավելի մեծ ուշադրություն են դարձնում հայ միջնադարյան արվեստի

* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, amelia_880@mail.ru, հոդվածի ներկայացնելու օրը՝ 20.09.2022, գրախոսելու օրը՝ 01.12.2022, տպագրության ընդունելու օրը՝ 15.12.2022:

ոճին, առանձնացնում են անհատ վարպետներին և դպրոցները, ինչպես մանրանկարչության մեջ, այնպես էլ այլ բնագավառներում՝ որմնանկար, քանդակ, ճարտարապետական ձևավորում: Արտասահմանում հայ հեղինակներից պատկերագրության ուսումնասիրության առումով հատկապես աննախադեպ է Ս. Տեր-Ներսեսյանի բեղուն գործունեությունը, որի աշխատություններում այդ ուսումնասիրությունը էական դեր է խաղում: Դա բխում է նաև այն բանից, որ Ս. Տեր-Ներսեսյանը, ինչպես և քրիստոնեական պատկերագրության ծագման և կազմավորման մեծ գիտակ Ա. Գրաբարն անցել են Գ. Միլլեի պատկերագրական հզոր դպրոցը:

Հիմնական նյութի շարադրանք

Հայ իրականության մեջ միջնադարյան մանրանկարչության և զարդարվեստի շատ կողմեր մեկնաբանելու համար, իհարկե, առաջին և հիմնական անսպառ աղբյուրը Սուրբ Գիրքն է՝ Հին և Նոր Կտակարաններով, ինչը հանդիսանում է նկարներում գրական աղբյուրների և աստվածաբանական բովանդակության ամենահավաստի հասկացման և ճշտման կամ շատ հազվադեպ նրանից շեղման հավաստման հնարավորությունը: Բայց դա ճիշտ է ոչ միայն հայ, այլև ասորական, բյուզանդական, վրացական, կարոլինգյան, ռոմանական, գոթական և, առհասարակ, միջնադարյան արվեստների համար:

Բայց կա մի նուրբ վերապահություն, որը երբեմն տեղին է, բայց ավելի հաճախ ապակողմնորոշման և անհիմն վեճերի և մեկնաբանությունների տեղիք է տալիս: Դա կապված է հայ եկեղեցու շուրջ 1600 տարվա պատմության և ինքնության՝ այսինքն հայ և ասորի, հայ և հույն, հայ և կաթոլիկ եկեղեցիների դավանաբանական տարբերությունների և վեճերի հետ, որի ամենամեծ արդյունքն այսօր մեզ համար հայապահպանությունն է, հայոց ինքնության հավաստիքը:

Մի քանի կարևոր գրքեր մեզ համար կարող են հիմք ծառայել դավանաբանական խնդիրների մասին որոշ ծանոթություն կազմելու համար: Դրանցից ուղղակի աղբյուր է հանդիսանում «Գիրք թղթոց» ժողովածուն (երկրորդ հրատ. Երուսաղեմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 1994, Նորայր Ա. Պողոսյանի վերանայումներով և բանասիրական ճշտումներով), Գարեգին Վեհափառ Սարգիսյանի (Գարեգին Ա) «Халкидонский собор и армянская церковь» (Մայր Աթոռ, Սբ. Էջմիածին, 2014) աշխատությունը՝ թարգմանված անգլերենից, Մ. Օրմանյանի «Ազգապատումը», «Հայոց եկեղեցին» և այլն: Ակադեմիական գիտնականներից այդ առումով կարևոր է Վրեժ Վարդանյանի «Հայոց եկեղեցին վաղ միջնադարի քաղաքական խաչուղիներում» (Սբ. Էջմիածին Վաղարշապատ, 2005) աշխատությունը:

Մենք շարժվելու ենք մեր արվեստագիտական թելադրանքով և հայ եկեղեցու դավանաբանությանը դիմելու ենք ծայր անհրաժեշտության դեպքում, ինչպես ցույց է տալիս պատմական դառը փորձը, անկախ հայրենասիրության և ազգային հպարտության մակարդակից առաջին իսկ հավատափոխությունը հանգեցնում է նոր հավատափոխման, իսկ արդյունքում՝ շատ արագ ապազգայնացման և թշնամացման հայոց եկեղեցու և նրա հավատացյալների դեմ: Դա-

վանաբանական տարբերություններն ավելի հստակ են և որոշակի դավանաբանական վեճերում, ապացույցներում, պատմական, եկեղեցաբանական վկայակոչումներում, քանի որ արվեստում կամ պատկերագրության մեջ, այսինքն պատկերագրական տարբերությունները, որոնք հայ միջնադարում հատկապես արտահայտված են զարդարվեստում, այնքան ցայտուն չեն սյուժետային-ֆիգուրատիվ արվեստում: Հայ և մնացած երկրների միջնադարյան քրիստոնեական արվեստում տարբերություններն ավելի ակնառու են ոճում, արտահայտության մեջ (ընդ որում դրանք ակնառու են նաև տարբեր դպրոցների և առանձին ձեռագրերի ու կոթողների, քանդակագործության և գունագծային ու ծավալային ոճական բազմազանության մեջ, ինչը այնքան բնորոշ չէ բյուզանդական արվեստին, բայց առավել հատկանշական է արևմտա-եվրոպական միջնադարյան տարբեր շրջաններին և դպրոցներին՝ ինչպես ռոմանական շրջանի որմնանկարչությունը): Որոշ որմնաքանդակային առնչություններ Ստրիժիգովսկու դիտարկումով առկա է նաև հայ և ռուսական որմնաքանդակում:

Չափազանց դժվար խնդիր է միայն հայոց Սուրբ եկեղեցու դավանաբանական հիմքերը որոշել հայ ողջ միջնադարյան արվեստի ուղին իր վերելքներով, անկումներով և իր վիթխարի բովանդակային և գեղարվեստական հարստությամբ և բազմազանությամբ, ինչը վաղուց նկատվել է ուսումնասիրողների կողմից:

Անշուշտ, յուրաքանչյուր պատկերի կամ թեմայի պատկերագրական վերլուծության ժամանակ հնարավորության դեպքում կանդրադառնանք նաև դավանաբանությանը, այսինքն՝ առաջին աղբյուրը լինելու է Սուրբ Գիրքը, հատկապես չորս Ավետարանները և ապա նաև Հին կտակարանը ու Առաքելոց թղթերը: Մեր հավատքի հիմքում, առաջին հերթին, Սուրբ Գիրքն է՝ Սահակ-Մեսրոպյան թարգմանությամբ, հատկապես Սուրբ Ավետարանները, որովհետև ամենից շատ դրանք են պատկերազարդվել: Այնուհետև յուրաքանչյուր թեմա և տոն ունի իր հիմքը առաջին հերթին Սուրբ Գրքում և ապա՝ Սուրբ Գրքի զանազան շարականներում, մեկնություններում, տոների բացատրություններում (Տոնական գրքերը) և դրանց մեկնաբանություններում առանձին: Այստեղ մեծ տեղ են գրավում նաև եկեղեցու Սուրբ հայրերի ճառերը, առաջին հերթին՝ այն հայրերի, որոնց հետևել են Գրիգոր Լուսավորչից հետո մեր կաթողիկոսները, սկսած Սահակ Պարթևից ու Մեսրոպ Մաշտոցից մինչև Մ. Օրմանյան և Գարեգին Ա. Կաթողիկոս: Առանց այդ ամենի դժվար է հասկանալ վիթխարի ոճական բազմազանության հետ այն միասնականությունը և հազվադեպ պատահականությունները, որոնք կարող են բխել օտար աղբյուրներից և բուն նկարչի մեկնաբանությունից, քանի որ նկարիչներից ոչ մեկը չի գործել առանց եկեղեցական կրթվածության և եկեղեցուց դուրս, թեկուզ ունենալով հաճախ շեշտված ոճական անհատականություն: Իսկ եթե պատվիրատուները արքա են, իշխան, կաթողիկոս, քահանա, թե սովորական աշխարհիկ մարդ, արհեստավոր, թե մուղդուսի՝ մահտեսի խորապես աստվածավախ մարդիկ են ու սրբությամբ հետևում են հայոց եկեղեցու կարգին և օրենքներին:

«Հայաստանյաց Ս. Եկեղեցին իբրև մի առաքելական հաստատություն ունի յուր վարդապետությունը, որ հիմնված է Սուրբ Գրքի և առաքելոց ավանդածի վրա» [1, էջ 21]: Դա վերաբերում է նաև միջնադարյան որմնանկարի, գրքարվեստի, քանդակի (եկեղեցական հարթաքանդակ, կոթող, խաչքար) ողջ պատմությանը՝ մինչև 19-րդ դարից սկսած փոփոխությունները եվրոպական արվեստի ազդեցությամբ:

Կարելի է Ա. Տեր-Միքելյանի և Գարեգին Սարգիսյանի (Գարեգին Ա. Կաթողիկոս) աշխատությունների հիման վրա կազմել մի համառոտ ակնարկ հայ եկեղեցու հավատքի և ինքնության մասին: Առաջինը պաշտպանում է հայոց հավատքը հիմնականում հունական և բողոքական եկեղեցուց իբրև իսկական ճշմարիտ, երկրորդը՝ հանդես է գալիս իբրև գիտնական և կաթողիկոս, որ հայոց եկեղեցին պահում է օտար ոտնձգություններից և թյուր մեկնաբանություններից:

Առաջինը հենվում է եկեղեցու դավանաբանության պատմության վրա, որի հիմքերը դրվել են Ս. Գրիգոր Լուսավորչի կողմից, ոչ միայն գործնականորեն, այլև տեսականորեն, երկրորդը դիտարկում է Քաղքեդոնի ժողովի և քաղքեդոնականության խնդիրը հայոց եկեղեցու տեսանկյունից: Բոլոր դեպքերում, անկախ այն բանից, թե այդ խնդիրն ինչպես է անդրադարձել հայ մանրանկարչության վրա, գուցե և չի անդրադարձել, մեզ անհրաժեշտ է այն հնարավորինս հստակորեն ներկայացնել ըստ այդ երկու երևելի գիտնականների:

Գարեգին Սարգիսյանը (Գարեգին Ա. կաթողիկոս) խնդիրը վերլուծել է «Քաղքեդոնի ժողովը և հայոց եկեղեցին» աշխատության մեջ [6, էջ 27-28]: Նա նշում է, որ հայ եկեղեցու դավանաբանությունը հասկանալու համար շատ կարևոր են «Գիրք թղթոց» և «Կնիք հավատոց» երկերը: Գարեգին Սարգիսյանը (ապագա վեհափառ Գարեգին Ա.) մեծաթիվ կարծիքներ է ներկայացնում այն մասին, թե ինչու հայերը չընդունեցին Քաղքեդոնի տիեզերական ժողովի որոշումները.

ա) այդ մասին ուշ իմացան կամ էլ անկարող էին մասնակցել ժողովին կրակապաշտության դեմ մղվող մեծ բազմամյա պատերազմում, որտեղ լուծվում էր հայերի քրիստոնեության մեջ և հայ մնալու կամ չմնալու խնդիրը:

բ) հայերը քաղքեդոնական ուսմունքը նմանեցրել են նեստորականների ուսմունքի հետ, որի դեմ կատաղի կերպով պայքարում էին: Կան նաև այլ պատճառներ, որոնք երկրորդական են մեր դեպքում:

Բայց նկատի չի առնվում կենսական պատճառը անկախ Սուրբ Երրորդության և Հիսուսի բնության բանաձևերից:

Եկեղեցին, ինչպես և նախարարները, քաջ գիտեին, որ հունա-պարսկական հակամարտության պայմաններում բացարձակորեն որևէ մեկի կողմն անցնելը կարող էր կործանարար լինել և՛ Հայաստանում քրիստոնեության հավատքի համար, և՛ հայ ժողովրդի համար, հատկապես բյուզանդական գերիշխանության դեպքում, քանի որ Հայաստանի հունական տիրապետության պայմաններում (Փոքր Հայք, Կապադովկիա, ավելի ուշ՝ Տայք և այլն) հայերը և նրանց նախարարները վերանում էին որպես հայեր՝ ուրանալով իրենց ազգը, և ստեղծվում էին հունացած նախարարական տներ, որոնք գրեթե զրո էին հայապահպանության տեսակետից և ավելի շուտ հայոց ավելի ոխերիմ թշնամիներ, քան

պարսիկները (հայ-մակեդոնական հարստության ժամանակ Մեծ Հայքի և Անիի գրավումը և Բյուզանդիայում հայ հոգևորականների հալածումը Ռոմանոս Դուկաս կայսեր ժամանակ):

Իսկ երբվանի՞ց են հայերը մերժել Քաղքեդոնի ժողովի դոգմաները: Կարծվում է հենց Հովհաննես Ա. Մանդակունի (մոտ 403-490 թթ.) կաթողիկոսի ժամանակ, որը Բաբկեն կաթողիկոսի հրավիրած 506 թ. Ժողովից առաջ՝ 484 թ. դատապարտել է Քաղքեդոնի ժողովը [6]:

Նա հստակ ցույց է տալիս Հիսուսի մարդ լինելու խորհուրդը «...արդէն Աստուած եկն եւ եղեւ մարդ, եւ մեռեաւ եւ փրկեաւ զարարածս: Արդ, այլ ոք արարիչ եւ փրկիչ եւ կեցուցիչ իբրեւ զնաոչ եղեւն եւ ոչ եկեղեցի եւ ոչ լինելոց է...» [1, էջ 175; 5, էջ 212]:

Ա. Տեր-Միքելյանը բերում է Հայաստանյաց Ս. Յեկեղեցուց ժամագրքի... հավատոյ հանգանակ է, որտեղ մեկ դեպքում կարևորում ենք հետևյալ կետերը, որոնք տոգորում են հայկական մանրանկարչությունը:

«Հաւատամք զ Երրորդութիւնն Սուրբ՝ մի բնութիւն, մի Աստուած, մի Աստուած ութիւն, ոչ երեք Աստուածք, այլ մի Աստուած, մի կամք, մի թագաւորութիւն, մի իշխանութիւն, արարիչ երեւելեաց եւ աներեւոյթից»:

«Հաւատամք յԵկեղեցի Սուրբ՝ զթողութիւն մեղաց՝ հաղորդութեամբ սրբոց»:

«Հաւատամք զմինըն յերից անձանց զԲանըն Աստուած ծնեալ ի Հօրէ նախ քան զյաւիտեանս, ի ժամանակին իջեալ յԱստուածին կոյսն Մարիամ, առեալ յարենե նորա՝ միաւորյաց ընդ յորում Աստվածութեանն, ինանմսեայ ժուժկալեալ յարգադի անարատ կուսին, եւ եղեալ Աստուածն կատարեալ, մարդ կատարեալ՝ հոգւու եւ մտօք եւ մարմնով. Միանձն, մի դեմ եւ միաւորեալ, մի բնութիւն, Աստուած մարդացեալ, առանց այլայլութեան, անսերմն, յղիութիւն եւ անապական ծնունդ. Որպես ոչ է սկիզբն աստուածութիւն նորա, եւ ոչ վախճան մարդկութեան նորա, զի Յիսուս Քրիստոս երէկ եւ այսօր նույն եւ յավիտեանն» [3]:

Հիսուս Քրիստոս ծնունդն է Հայր Աստծո, հավիտենականորեն, միշտ նրա հետ: Որովհետև եթե այլ կերպ դատենք՝ կընկնենք աէրոսականության գիրկը, որ մերժվել է Նիկեայի առաջին տիեզերաժողովում: Նա բացարձակ Բանն է, խոսքը և բանականությունը, հորից անբաժան (Յով. ՇԷ, 5, 8, 24, Ժ. 30) միածինը բնությամբ է որդի և ոչ թե որդեգրությամբ: Եվ նրա, Հոր և Սուրբ Հոգու կամքը մեկ են, «ամենայն հրամանք Հոր կամաց ելանեն ի բերանոյ որդվոց» (Ագաթ. 244) [5, էջ 165-166]: Մամբրե Վերծանողը այսպես է մեկնաբանում Սուրբ Երրորդությունը. «Արդ ոչ ծնունդ եւ ոչ ելոխ, եւ որդի ոչ ծնող է եւ ոչ ելոխ, եւ Հոգին Սուրբ ոչ ծնող է եւ ոչ ծնունդ, այլ միշտ գոյություն ունի» [4, էջ 1117]:

Իսկ ինչպիսին է մարդու և Աստծո, Աստծո նկատմամբ մարդու և հրեշտակների հարաբերությունը համեմատական կարգով: Նման հարցերի պատասխանները պետք է գտնենք Արշակ Տեր-Միքելյանի «Հայաստանեաց Սուրբ եկեղեցու քրիստոնեականը» դավանաբանական ձեռնարկում և դրանք լրացնենք Դիոնիսիոս Արեապագացու, Աստծո հայրերի և հայոց եկեղեցու հայրերի պատասխաններով ու բանաձևերով՝ սկսած Գրիգոր Լուսավորչից, նաև՝ օգտվելով այլ հեղինակներից, ինչպես Մաղաքիա Օրմանյանը և ուրիշներ և այն չափով,

ինչ չափով հնարավոր է հայ միջնադարյան մանրանկարչության մեջ պատկերագրության խնդիրները և լուծումները հասկանալու համար:

Տեսենք ինչպես է այդ հարցերի պատասխանը դիտարկում Ա. Տեր-Միքելյանն իր ձեռնարկի «Մարդու ստեղծումը» գլխում: Անշուշտ զուգահեռաբար կբերենք տիեզերական հայրերի պատասխանները մեր հնարավորությունների չափով:

Աստված, հրեշտակ և մարդ միմյանց մոտ են նմանությամբ ընդ որում՝ բանականությամբ: Ըստ Եղիշեի՝ «Բանաւոր մարդ եւ հրեշտակ միայն եւ Աստուած ի վեր քան զերկինս եւ զերկիր» (Եղիշե, 27): Տեր-Միքելյանը դիմում է Եղիշեին. «…եւ մարդ միայն Աստուածասեր. Աստուած մարդոյ, եւ մարդ Աստուծոյ վասն մարդոյ Աստուած մարդացել եւ վասն Աստուծոյ մարդաստուածացեալ» [4, էջ 107] (Եղիշէ, 293, 320, Եզնիկ, 93-95):

Չարը բխում է մարդուն և հրեշտակներին ընձեռված ընտրությունից՝ ընտրել բարին թե չարը [4, էջ 107]: Եզնիկն նշում է, որ «Ի բարերարչիեն չար ինչ չիք լեալ. Եւ չիք ինչ չար որ, բնութեամբ չար իցէ…» [4, էջ 193]:

«Գիրք թղթոցում» շատ և հատկապես հիմնական աստվածաբանական հարցերի պատասխաններ հնչում են եկեղեցու հայրերի բերանով, հատկապես հայոց եկեղեցու, որ հետևում է առաջին երեք տիեզերաժողովների կարգած օրենքներին:

Այդ թվում նկատի ունենք «Թուղթ Կիւրեղի առ Նեստոր», որտեղ էլ սկսվում է հայ եկեղեցու անհանդուրժողականությունը Քաղքեդոնի 551 թ. Ժողովի նկատմամբ, որ ժխտում է Նեստորին ուղղված Սուրբ Կյուրեղի Ալեքսանդրիայի եպիսկոպոսի թուղթը, որը վճռականորեն հերքում է Քրիստոսի անձի երկբնությունը, ասելով՝ «այսուհետեւ մի է Քրիստոս՝ Որդի եւ Տէր…», այնուհետև. «…Միացաւ Բանն Աստուած ի մարմնի բնութեամբ, եւ է ամենեցուն Աստուած, եւ իրէ ամենի, եւ ոչ ինքն յիւր ծառայ է եւ ոչ իմքն յիւր էր» [2, էջ 15]: «Զի ահա Պետրոս եւ Յովհաննեսը հավասարապատիւք են միմեանց, զի առաքեալք եւ աշակերտք, սակայն չեն մին երկուքն…» [2, էջ 15]:

Սա կարևոր է, որովհետև առաքյալների հավասարության «բանաձևը» հետագայում, օրինակ, Գրիգոր Տաթևացին օգտագործում էր Հռոմի կաթոլիկ եկեղեցու դեմ, որը նախադասում էր Պետրոսին մյուս առաքյալներից: Առաքյալների հավասարության հարցը նորից դրվեց Ներսես Շնորհալու և Գրիգոր Տաթևացու կողմից, երբ բարձրացվեց Պապի և Պոլսի պատրիարքի առաջադասության հարցը, որի նպատակն էր հայոց եկեղեցու ուղղափառության (առաքելական) հարցը կասկածի տակ դնելը և նրա ստորադասումը հույն և լատին եկեղեցիներին:

Այսուհետև Սուրբ Կյուրեղը շարունակում է Քրիստոսի Բնության հարցը. «Թէպէտ եւ ասէ Աստուած յիւր Հայր, սակայն Աստուած է ինքն բնութեամբ եւ ի բնութենէ այլ ոչ թե եթե անգիտացաք ինչ այնմ, զի հանդերձ աստուծութեամբ եւ մարդ եղեւ»: Այնուհետև նա շարունակում է. «Եւ խոստովանիմք եթէ նոյն ինքնին, որ յԱստոծոց Հաւրէ ծնեալ Որդի եւ Աստուած Միածին, որ յիւրով բնութեամբ անվիշտ էր մարմնով յիւրով մեռաւ վասն մեր ըստ գրոց, եւ տեր ի խաչ ելեալ ընդ յիւրում, եւ անվշտութեամբ յիւրացոյց զվիշտս մարմնոյ շնորհոք Աստուծոյ վասն մեր զմահ ճաշակելեաց» [2, էջ 16]:

Չափազանց ուշագրավ և խորհրդավոր է անեծքների այն շարքը, որ բերում է սուրբ Կյուրեղը իր թղթի վերջում, և որոնց հիմնական բովանդակությունն է՝ Բանն Աստված մարդ դարձավ կենդանացնելու համար մեղքերի մեջ թաղված մարդկությանը [2, էջ 23-24]:

Սուրբ Կյուրեղի հարցադրումները և բանաձևերը, ինչպես ցույց է տալիս «Գիրք թղթոց» ժողովածուն, ավելի բյուրեղացել և քաջ մեկնաբանվել են հայ եկեղեցու հայրերի կողմից, Սուրբ Սահակի, Սուրբ Մեսրոպի, Եզնիկ Կողբացու և նրանց սերնդեսերունդ հաջորդած հայոց սուրբ եկեղեցու հայրերի կողմից: Մեզ, թող թույլատրվի մանրամասն հավելել.

ա. «խոստովանել զՔրիստոս Աստուած ճշմարիտ եւ Որդի Աստուծոյ եւ Միածին, ծնեալ ի Հօրէ յառաջ քան զյավիտեանս, եւ Տէր արարիչ ամենայն արարածս, եւ զնոյն Բանն Աստուած ի վախճան ժամանակաց զգեցիալ մարմին եւ եղեալ վասն մեր մարդ, եւ ծնեալ սուրբ Կուսեն. Աստուած՝ ըստ մարմնաւոր ծննդեան մարդ կատարեալ. Եւ կոչի եւ է կոյսն Տիրածին եւ Աստուածածին, եւ ծնելն Աստուած եւ մարդ կատարեալ» [2, էջ 28]:

Կողբացիի հաջորդ բանաձևը ավելի ընդգրկուն է և նոր հատկանիշներ է հավելում. «Մի Աստուած խոստովանինք՝ յանդիմանութիւն բազմաթիվ չԱստուծոյ, պարտական, անյաւնդական հաստիչ, եւ կազմիչ երեւելեաց եւ աներեւութից: Եւ նման էն եւ ընդնմա առ նմին մի ծնունդն՝ արարչակից, համազաւր, համագործ: Եւ մի հոգի Սուրբ Աստուծոյ, մշտնջենաւոր… Այսպես կատարեալ Սուրբ Երրորդութիւնն դաւանի ի Սուրբ եւ ի համաշխարեական եկեղեցին, անմարմին, անզննական, անտարրական, կանխագէտ. Յառողջիմաց քան զամենայն արարեալս եւ հաստատեալս, ի մի թագաւորութիւն եւ ի մի Աստուածութիւն՝ յերիս անձինս կատարեալս: Զի ոչ անձն Հօրն է անձն Որդւոյ. Քանզի ոչ յիւրոյ անձինն է Հայր եւ ոչ անձն Որդւոյ է անձն Հօր. Քանզի ոչ եթէ յիւրոյ անձինն է Որդի, եւ ոչ անձն Սուրբ Հոգւոյ է անձ ն Հօր կամ Որդւոյ, զի ոչ եթէ յիւրոյ անձինն է Հոգին այլ Աստուծոյ Հոգի» [2, էջ 29]:

Նույն ոգով է օժտված Կ. Պոլսի պատրիարք Պրոկլին ուղղված Սուրբ Սահակի և Սուրբ Մաշտոցի պատասխանը. «Այլ մեկհաւատամք ի մի Աստուած, Հայր ամենակալ, արարիչ երկնից եւ երկրից, երեւելի եւ աներեւոյթ արարածոց: Եւ մի տէր Յիսուս Քրիստոս, ի միածին Որդի Աստուծոյ, այսինքն է էութիւն յէութենէ, էութիւն ծնեալ՝ որով ամենայն եղեւ Աստուած յԱստուծոյ լոյս ի լուսոյ ծնեալ եւ ոչ արարեալ, որ վասն մեր մարդկութեան էջ եւ մարմնացաւ, յանձն առ չարչարանս, յարեաւ յերկիր աւու եւ յերկինս, եւ գայ դատել զկենդանիս եւ զմեռեալս: Ու ի Սուրբ Հոգին հաւատամք…» [2, էջ 42-43]:

Սա այն անսասան հավատի ձևակերպումն է՝ ուղղված հերետիկոսների դեմ, որոնցից այնքան զգուշանում էր իր թղթում Պրոկլը:

Կան և էական լրացումներ նույն թղթում. «…առ յանձն լինել մարդ կատարեալ յաստուածածին Մարիամայ սրբով Հոգով, առեալ շունչ եւ մարմին ճշմարիտ եւ ոչ կեղծեաւք, այսպես եւ կարեաց փրկել զմեզ մարդկութիւնը, եւ ճշմարիտ չարչարանաւ …ոչ թէ ինքն պարտէր է չարչարանաց, զի ազատ է աստուածութիւնն ի չարչարանաց, այլ վասն մեր էառ յանձն զչարչարանաց, խաչեցաւ, եւ

յերկին համբարձաւ, եւ ընդաջմէ Հաւր նստաւ, եւ գալոց ի դատել զկենդանիս եւ ըզմեռեալս: Այլ առ կատարման հաւատոց՝ հաւատամք ի մի մկրտութիւն ապաշխարութեան, եւ մի կաթուղիկէ եկեղեցի... եւ Աստուած խոստովանինք զՀաւր եւ զՈրդի եւ զսուրբ Հոգի, մի Աստուածութիւն սրբոց Երրորդութեանն, զի Հոգի է Աստուած, եւ կամաւք երեւեալ, խաւսեալ աւրինոք եւ մարգարէիւք եւ առաքելովք» [2, էջ 43-44]:

Եվս մի կետ է ավելացվում, որ «ամանեյն մարդ ըստ պատկերի Աստուծոյ», բայց ինչպես – միայն Աստված գիտե: Իսկ մարդուն տրված աստվածային նմանությունը մարդու ամենամեծ նվերն է և ցույց է տալիս մարդու նկատմամբ աստվածային մեծ սերը:

Եզրակացություն

Այսպիսով՝ ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ հետևյալը՝

1. դավանաբանությունը անմիջական ազդեցություն է թողնել պատկերագրության վրա:

2. պատկերագրական տարբերությունները միջնադարում հատկապես ակնառու են զարդարվեստում:

Գրականություն

1. Տեր-Միքելյան Ա. Հայաստանյաց Ս. Յեկեղեցու քրիստոնեականը, Ձեռնարկ դավանաբանության. Ս. Էջմիածին, Մ. Աթոռ Ս. Էջմիածնի հրատ., 2007:

2. Գիրք թղթոց, երկրորդ հրատ. Երուսաղեմ, 1994:

3. Ժամագիրք

5. Մատենագիրք հայոց, Ա հատոր. Անթիլիաս-Լիբանան, 2003:

5. Ս. Հովհան Մանդակունի, Ճառք:

6. Гарегин Саргисян. Халкидонский собор и Армянская церковь первопрестольный. Св. Эчмиадзин, 2014.

References

1. Ter-Mikelyan A. The Christendom of the Holy Church of Armenia, Handbook of Teology. Holy Etchmiadzin, Mother See of Holy Etchmiadzin Publishing House, 2007 (in Armenian).

2. Girk Tghtots (The Book of Papers), Second Edition. Jerusalem, 1994 (in Armenian).

3. Zhamagirk (Prayer Book) (in Armenian).

4. Bibliography of Armenian Books, vol. 1. Antilias-Libanon, 2003 (in Armenian).

5. St. Hovhan Mandakuni, Speeches (in Armenian).

6. Garegin Sargisyan. The Council of Calcedon and the Armenian Church. Mother See of Holy Etchmiadzin Publishing House, 2014 (in Russian).

ОБ ИКОНОГРАФИИ И ИКОНОЛОГИИ ИСКУССТВА (ЧАСТЬ 2)

ВИГЕН КАЗАРЯН*

Для цитирования: Казарян, Виген. “Об иконографии и иконологии искусства (часть 2)”. *Искусствоведческий журнал,* N 2 (2022): 224-233. DOI: 10.54503/2579-2830-2022.2(8)-224

С конца 19-го века до наших дней осуществлены многочисленные исследования, посвященные иконографии христианского искусства. В этом плане беспрецедентным является плодотворная научная деятельность С. Тер-Нерсесян и большого знатока происхождения и формирования иконографии А. Грабара. В христианском искусстве Армении и других стран наиболее заметны стилистические различия. Больше всего иллюстрировались Святые Евангелия. Основным источником для интерпретации средневековой миниатюры и орнаментального искусства стала Священное Писаниие, которое дает возможность понять богословское содержание и подтвердить отклонения армянского, а также ассирийского, византийского, грузинского, каролингского, романского, готического и средневекового искусства в целом. Произведения «Книга писем» и «Книга о вере» очень важны для толкования и понимания богословских проблем Армянской церкви.

В результате исследований выяснилось, что вероисповедание оказывает непосредственное влияние на иконографию. Иконографические различия особенно заметны в средневековом орнаментальном искусстве.

Ключевые слова: иконография, вероисповедание, средневековое искусство, миниатюра, орнаментальное искусство, «Книга писем», «Книга о вере».

* Заведующий отделом изобразительного искусства Института искусств НАН РА, член-корреспондент НАН РА, заслуженный деятель культуры Армении, доктор искусствоведения, профессор, amelia_880@mail.ru, статья представлена 20.09.2022, рецензирована 01.12.2022, принята к публикации 15.12.2022.

ON THE ICONOGRAPHY AND ICONOLOGY OF ART (PART 2)

VIGEN GHAZARYAN*

For citation: Ghazaryan, Vigen. "On the Iconography and Iconology of Art (part 2)", *Journal of Art Studies,* N 2 (2022): 224-233. DOI: 10.54503/2579-2830-2022.2(8)-224

From the end of the 19th century to the present day, numerous studies have been conducted on the iconography of Christian art. In this regard, the studies and fruitful activity of S. Der Nersessian and A. Grabar, a great connoisseur of the origin and formation of iconography, are unprecedented. Stylistic differences are most obvious in the Christian art of Armenia and other countries. The sacred Gospels were illustrated most of all. The Holy Book was the main source for the interpretation of medieval miniature painting and ornamental art, which allows us to understand the theological content. "The Book of Papers" and "The Seal of Faith" are the most important works to interpret the dogmatic problems of the Armenian Church and to understand religion.

As a result of research, it turned out that religion has a direct impact on iconography. Iconographic differences in the Middle Ages are especially noticeable in ornamental art.

Key words: iconography, religion, medieval art, miniaturepainting, ornamental art, "The Book of Papers", "The Seal of Faith".

* Head of the Fine Arts Department of the NAS RA Institute of Arts, Corresponding Member of NAS RA, Honored Culture Worker of the RA, Doctor of Sciences (Arts), Professor, amelia_880@mail.ru. The article was submitted on 20.09.2022, reviewed on 01.12.2022, accepted for publication on 15.12.2022.